ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 66–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 15 ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի թվով 15 (տասնհինգ) համատիրություններ դիմել են Գյումրու քաղաքապետին և հայտնել, որ իրենց կողմից ուսումնասիրվել են Գյումրի քաղաքի թվով 80 (ութսուն) բազմաբնակարան շենքերը, որոնք կառուցված են եղել մինչև երկրաշարժը, ինչպես նաև երկրաշարժից հետո, տանիքները և մուտքերը գտնվում են խիստ անմխիթար վիճակում և ունեն վերանորոգման կարիք:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համատիրությունների նախագահներ՝ Մովսես Ջուհարյանի, Գագիկ Գալստյանի, Ազատ Ավագյանի, Սենիկ Եսայանի, Ժորա Վարդանյանի, Հակոբ Հունանյանի, Հրայր Խաչատրյանի, Մկրտիչ Հակոբյանի, Սեյրան Պոլոյանի, Գայանե, Սահակյանի, Ռուզաննա Խաչատրյանի, Ամալյա Բաբալիկյանի, Սեդա Ծառուկյանի, Թամարա Ասատրյանի և Անդրանիկ Թորոսյանի գրությունները (քաղաքապետարանում մուտքագրված համապատասխանաբար՝ NN 4592, 4444, 4476, 4472, 4454, 4467, 4470, 4450, 4443, 4412, 4475, 4469, 4460, 4446, 4473 թվագրումներով)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի թվով 15 (տասնհինգ) համատիրություններին տրամադրել սուբսիդիա 19.200.000 (տասնինը միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ սպասարկման տարածքներում գտնվող բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի վերանորոգման նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4521) «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

30 ապրիլի 2015թ.
ք.Գյումրի